

# ԱՆՅԱՒԱՏԱԼԻ, ԲԱՅՑ ԻՐԱՒ...

- \* Կարգ մը կարիճներ 12 աչք ունին:
- \* Բոյսերը կրնան աւելի արագ աճիլ, եթէ անոնք երաժշտութիւն լսեն:
- \* Ծառերը «կը քնանան» գիշերը:
- \* Շուներուն լուերը շատ աւելի բարձր կը ցական են քան՝ կատուներուն լուերը:
- \* Կետերը կրնան համտեսել միայն աղի ուտելիքներ:
- \* Ծնունդի պահուն Խաղաղականի հսկայ ընգղան մօտաւորապէս մեղուի մը չափը ունի:
- \* Սարդերը իրենց ոտքերով կը լսեն:
- \* Ընձուղտը կրնայ իր քիթը իր լեզուովը մաքրել:
- \* Սիպերիոյ մէջ գտնուող լիճ մը առանձին կը պարունակէ ամբողջ աշխարհի անուշ ջուրին մէկ հինգերորդը:
- \* Աշխարհի ամենէն երկար վագրի մըրցումին ընթացքին վագրողները օրական մօտաւորապէս 97 քմ. կը վագէին 52 օրուան ընթացքին:



Թիւ աստուստ՝ Ռիթա Կարեն-Տրոյիբեան  
Նպաստող՝ Ռաֆի Բեօրեան

# ԿԿՈՒ

ՄԱՆԿԱՊԱՏԱՆԵԿԱՆ ԹԵՐԹԻԿ



Թիւ 16

ԱՊՐԻԼ 9, 2018



## ՓՈՋՐԻԿ ԱՇԽԱՐՀ ՄԸ



Ճափոնցի արուեստագետ Քիյոմի Երկու փոքրիկներու մայր է: Ան կը սիրէ արթննալ առտու շատ կանուխ, երբ բոլորը տակաւին կը քնանան, եւ իշխող լռութիւնը կ'աշխատցնէ իր երեւակայութիւնը:

Հետեւաբար ան կը մտնէ իր բանաստեղծական փոքրիկ աշխարհը՝ ստեղծելու մանր կարասիներ եւ առարկաներ, որոնց կարելի է հանդիպիլ միայն շքեղ պուպրիկներու տուններուն մէջ:

Ներշնչուելով 18-րդ դարէն՝ Քիյոմի կը ստեղծէ իր մանր առարկաները՝ թուղթերով պարաներով կերպընկալով...

Անոր ստեղծած բոլոր առարկաները՝ պահարանները, աթոռները, մկրատները, կարի մեքենան եւ դերձաններու ճախարակները փոքրիկ զրոյսներն են եւ լոյնիսկ հացավաճառի ցուցափեղկերուն մէջի անուշեղէնները մեծ խնամքով եւ մանրամասնութեամբ շինուած են եւ Քիյոմիի ձեռքի աշխատանքն են:



**ՅԵՏԱԲԵՐԲՐԱԿԱՆ...  
ՅԵՏԱԲԵՐԲՐԱԿԱՆ**

**Ամենն բարձր գագա՞թը**

Էվերեսթը իր 8848 մետր բարձրությամբ աշխարհի ամենն բարձր գագաթն է: Սակայն Էբուատորի մեջ Շիմպորագոյի գագաթը, որ կը հասնի 6323 մետրի երկրագունդի կեդրոնէն ամենն հեռու կէտն է, պարզապէս որովհետեւ մեր մոլորակը կլոր չէ եւ Շիմպորագոն կը գտնուի հոն, ուր ան ամենն ցցունն է:

**Պաշտօնեաներուն հանգստութեան համար**

Իր պաշտօնեաներուն հանգստին համար ճափոնական հաստատութիւն մը յղացած է իւրայատուկ գաղափար մը: Ան գրասենեակ բերած է կատուներ: Ըստ ուսումնասիրութիւններուն, անոնց մոմօռը սթրեսի դէմ շատ ազդու է:

Այս ձեւով ինչ կատուներ ազատօրէն կը պտտին գրասենեակներուն միջեւ, կը ցատկէն պաշտօնեաներուն գիրկը, կը խաղան համակարգիչներուն ստեղնաշարերով իրենց ուզած ատեն կ'ուտեն, կը քնանան...


**Կեանք տուող հրաբուխը**

Երբ Թակորո ընդծովեայ հրաբուխը բերնին տակէն բարձրացաւ ատլանտեան ովկիանոսին մէջ Քանարիա կղզիներուն մօտ, ան ամեն ինչ փճացուց իր շուրջ....


Սակայն նոյն ատեն ան բացայայտեց նաեւ կեանքի նոր ձեւ մը «Արուսեակի մագեր» անուանուած ճերմակ եւ մագոտ մանրէներու խումբեր:



Կրնա՞ս գտնել պատկերին մէջ պահուած նապաստակի 20 գլուխները:



Կրնա՞ս գտնել երկու պատկերներուն միջեւ գոյութիւն ունեցող ներք:



Ներկէ՛ նախասիրած գոյներովը:

# ՎՏԱՆԳՈՒԱԾ ԿՂԶԻՆ

Նապիլա կ'ապրի Ինտոնեգիոյ փոքրիկ կղզիներէն մէկուն վրայ: Կլիմայի տաքնալուն պատճառով ծովը կը բարձրանայ, եւ անոր կղզիին կրնայ օր մը ջուրին տակ անհետանալ:

Նապիլա դպրոց կ'երթայ Երկուշաբթիէն շաբաթ, առտուան ժամը՝ եօթէն կեսօրէ ետք ժամը մէկ: Միջնակարգ դասարանները աւարտելէ ետք մեծ թիւով տղաք ձկնորս կը դառնան, մինչ աղջիկները կը մնան տունը, որովհետեւ գիշերօթիկ դպրոցը շատ հեռու է՝ ուրիշ կղզիի մը վրայ: Սակայն Նապիլա կ'ուզէ հետագային համալր-սարան յաճախել իր մեծ եղբօր նման:

Երբ Նապիլա դպրոցէն կը վերադառնայ, իր փոքրիկ խանութը կը շտկէ իր տան դէմ քիչ մը դրամ շահելու համար: Ան կը ծախէ պոնպոններ, պզտիկներու հագուստներ եւ խաղալիքներ: Գետնայարկին վրայ անոր մայրը կը ծախէ կղզիին վրայ ապրելու համար անհրաժեշտ տեսակաւոր ապրանքներ, բանջարեղէններ, բրինձ, գամեր, պարան...

Նապիլայէնց տունը ծորակէն հոսող ջուր չկայ: Խմելու ջուրը նաւակով կը բերուի: Հետեւաբար անոնք, որքան կրնան, ծովուն ջուրը կը գործածեն լուացուելու համար, բաղնիքը թափելու... Անոնք ելեկտրականութիւն ալ չունին: Երբ Նապիլա կ'ուզէ իր դասերը սորվիլ իրիկունը, կը գործածէ քարիւղով լապտեր մը:

Կղզին շատ փոքր է եւ ցած: Անոր տարածութիւնը հաւասար է երկու ֆութպոլի դաշտերու: Ան նոյն ատեն շատ ցած է: Տուները ծովու մակերեսէն միայն 1 կամ 2 մէթր բարձր կը գտնուին: Երկրագունդին ընդհանուր կլիմային տաքնալուն պատճառով կարգ մը անձեր կը մտածեն, որ ովկիանոսին մակերեսը կրնայ 1 մէթր բարձրանալ մինչեւ 2100 թուականը: Այդ ժամանակ կղզին ամբողջովին պիտի կորսուի ջուրին տակ: Կղզիին բնակիչները երբեմն կը մտածեն այս կարելիութեան մասին, սակայն չեն գիտեր՝ ի՞նչ ընել այս վիճակը փոխելու համար...:

# ՊՈՒՊՐԻԿՆԵՐՈՒ ՅԻՒԱՆԴԱՆՈՅԸ

Փորթուկալի մայրաքաղաք Լիզպոնի կեդրոնը կը գտնուի իւրայատուկ «պուպրիկներու հիւանդանոց» մը: Հոն, այս նուրբ խաղալիքները կը նորոգուին կամ կը հաւաքուին զգուշութեամբ եւ սիրով՝ հինգ սերունդներէ ի վեր:

Իւրաքանչիւր պուպրիկ ունի իրեն յատուկ «հիւանդի քարտը»: Այս հիւանդները կը խնամուին փորձառու երեք «բժշկուհիներու» կողմէ: Այս կիները անոնց կը դնեն նոր աչք մը, թեւ մը կամ մազեր, որ կ'ընտրեն պզտիկ դարակներու մէջ շարուած հարիւրաւոր կտորներէ:

1830-ին հիմնուած այս հաստատութեան անուկը յիշուած է զբօսաշրջիկներու ուղեցոյցի գիրքերուն մէջ՝ իբրեւ աշխարհի ամենէն հին «պուպրիկներու հիւանդանոցներէն» մէկը, որ տակաւին կը բանի, ինչպէս նաեւ աշխարհի տասը ամենէն շատ հետաքրքրական խաղալիքներու խանութներէն մէկը:

«Հիւանդանոցային» յաճախորդները թանգարաններ են, հաւաքածոներու սիրահարներ, սակայն յատկապէս՝ անհատներ, որոնք շատ կ'ապուած են այս առարկաներուն:



Ընտանեկան այս հաստատութեան պատմութիւնը սկսած է 19-րդ դարուն: «Փոքրիկ պառաւ կին» մը՝ Քարլոթա տա Սիլվան Լուս իր ժամանակը կ'անցընէր կտորէ պուպրիկներ շինելով՝ նըստած իրեն ծանօթ բժշկական խոտեր եւ համեմներ ծախող անձի մը փողոցի թիւ 7 խանութին առջեւ Լիզպոնի Փրասա տա Ֆիկերայի մէջ, ուր բացօթեայ մեծ շուկայ մը գոյութիւն ունէր:

Ժամանակի ընթացքին խանութին ցուցափեղկերը զարդարող պուպրիկները գրաւեցին բժշկական խոտերուն եւ համեմներուն տեղը: Ամբողջ թանգարան մը յատկացուեցաւ այդ պուպրիկներուն՝ առաջին յարկին վրայ մօտաւորապէս 4000

պուպրիկներ կը լեցնեն այդ թանգարանը մինչեւ առաստաղը ոչ շատ հեռու այն աշխատանոցէն, ուր կը խնամուին «հիւանդները»: Հոն կարելի է գտնել յախճապակիէ զլուխներով հարիւրամեայ պուպրիկներ, պուպրիկներու տուններ, Փորթուկալի տարբեր շրջաններու աւանդական հագուստներով պուպրիկներու հաւաքածոյ մը եւ նոյնիսկ՝ քանի մը արդի Պարպիկներ:

